ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
0010 քաղ. Երևան, Վ. Վաղարշյան 13Ա, հեռ. 011-900-039, ֆաքս 011-90-00-18

N 18-12049-18
22 հոկտեմբերի, 2018թ.

,,Հետաքննող լրագրողներ,, ՀԿ նախագահ և
www.hetq.am ինտերնետային
պարբերականի գլխավոր խմբագիր
Էդ.Բաղդասարյանի ներկայացուցիչ,
փաստաբան
Արայիկ Ղազարյանին

Հարգելի՛ պարոն Ղազարյան,

Ի պատասխան Ձեր 20.09.2018թ. դիմումի՝ տրամադրում եմ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում քննված թիվ 62211616 քրեական գործով քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշման պատճենը:

Առդիր՝ 13 թերթ

Հարգանքով՝

ՀՀ հատուկ քննչական ծառայության ընդհանուր
բնույթի հանցագործությունների
քննության վարչության պետ՝ Ա.Օհանյան

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին

23 հունվարի, 2017թ. ք.Երևան

ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ ավագ քննիչ, արդարադատության մայոր Դ.Կոստանդյանս, քննարկելով վարույթիս թիվ 62211616 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2016թ. ապրիլի 4-ին լրատվության միջոց համարվող <<hetq.am>> էլեկտրոնային կայքում հրապարակվել է <<Պանաման նվաճած հայ գեներալը...>> վերտառությամբ հոդվածն այն մասին, որ <<Հետաքննող լրագրողների միջազգային կոնսորցիումը(ICIJ)>> գաղտնազերծել է մի շարք երկրների օֆշորային ընկերությունների փաստաթղթեր, համաձայն որոնց՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայության պետ Միհրան Պողոսյանը, 2008-2016թթ. ընթացքում օրենքով սահմանված արգելքին հակառակ, հիմնադրել է ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող <<Սիգթեմ ռեալ իսթեյթ ինքորփորեյթիդ>> և <<Հոփքինթեն թրեյդինգ ինքորփորեյթիդ>> ընկերությունները, ապա նույն ժամանակահատվածում մասնակցել է ինչպես վերը նշված երկու ընկերությունների, դրանց կողմից հիմնադրված ,,Բեսթ ռեալթի,, ՍՊ ընկերության, այնպես էլ՝ <<Բանջիո ինվեստ>>, <<Քեթրին գրուպ>> և այլ ընկերությունների կառավարմանը, ինչը կապված է եղել այդ կազմակերպություններին ի պաշտոնե արտոնություններ և առավելություններ տրամադրելու եղանակով հովանավորելու հետ:

Դեպքի առթիվ 29.04.2016թ. ՀՀ հատուկ քննչական ծառայությունում ՀՀ քրեական օրենսգրքի 310-րդ հոդվածով հարուցվել է թիվ 62211616 քրեական գործը և կատարվել նախաքննություն:

Նախաքննության ընթացքում պարզվել է, որ 2016թ. ապրիլի 4-ին <<hetq.am>> էլեկտրոնային կայքում, իսկ ապրիլի 5-ին ,,Ժողովուրդ,, օրաթերթում հոդվածներ են հրապարակվել այն մասին, որ՝

1. ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայության պետ Մ.Պողոսյանը 2011թ. մարտից հանդիսանում է Պանամայի Հանրապետության օֆշորային գոտում գրանցված ,,Սիգթեմ ռեալ իսթեյթ ինքորփորեյթիդ,, և ,,Հոփքինթեն թրեյդինգ ինքորփորեյթիդ,, ընկերությունների բաժնետեր, այն դեպքում, երբ նա այդ պաշտոնը զբաղեցնում է 2008թ-ից: Երկու ընկերությունները Շվեյցարական LCT BANK (Suise) SA բանկում ունեն հաշիվներ, որոնց միակ կառավարման ստորագրությունը պատկանում է Մ.Պողոսյանին:

,,Սիգթեմ ռեալ իսթեյթ ինքորփորեյթիդ,, ընկերության տնօրեն-նախագահը Մ.Պողոսյանի ընկեր, ՀՀ ԱԺ պատգամավոր Արթուր Ստեփանյանն է, իսկ ,,Հոփքինթեն թրեյդինգ ինքորփորեյթիդ,, ընկերության տնօրենը՝ Մ.Պողոսյանի կնոջ մորաքրոջ դուստր Լիաննա Մուրադյանը: Վերը նշված երկու ընկերությունները 50/50 բաժնեմասերով հանդիսանում են Հայաստանի

Հանրապետությունում գրանցված ,,Բեսթ ռեալթի,, ՍՊԸ-ի հիմնադիրներ, որի տնօրենը Միհրան Պողոսյանի ազգական Էդուարդ Հարությունյանն է: ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայության կատարողական վարույթներով անշարժ գույքերի գնահատումները հիմնականում իրականացվել են ՀՀ գլխավոր հարկադիր կատարող Մ.Պողոսյանին պատկանող ,,Բեսթ ռեալթի,, ՍՊԸ-ի կողմից:

2. Միհրան Պողոսյանը հանդիսանում է ,,Քեթրին գրուպ,, ՍՊԸ-ի հիմնադիրը, որում մինչև 2008թ. բաժնեմաս է ունեցել, իսկ մինչև 2015թ-ը նույն ՍՊԸ-ում բաժնեմաս է ունեցել նրա կինը՝ Կարինե Միհիթարյանը: ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի պաշտոնը զբաղեցնող Մ.Պողոսյանին պատկանող ընկերությունը 2015թ. պետական գնումների պայմանագրով ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների պայմանագիր է կնքել ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայության հետ: Փաստացի ,,Քեթրին գրուպ,, ՍՊԸ-ին է պատկանում նաև Ծաղկաձորի ,,Կեչառիս,, հյունարոցային համալիրը:

Մ.Պողոսյանի անունը կապված է մի շարք այլ ընկերությունների, մասնավորապես՝ ,,Բանջիո ինվեստ,, ՍՊԸ-ի, ,,Փարքինգ սիթի Սերվիս,, ՓԲԸ-ի, ,,Միկշին,, ՍՊԸ-ի, ,,Կագա Կրեդո,, ՍՊԸ-ի, ,,Միկմետալ,, ՓԲԸ-ի և այլ ընկերությունների հետ և Մ.Պողոսյանն ի պաշտոնե հովանավորել է այդ ընկերությունները:

Բացի այդ, 2013-2014թթ. ընթացքում Միհրան Պողոսյանը տարբեր քաղաքացիներից գումարի բռնագանձման պահանջով դատարաններ հայցադիմումներ է ներկայացրել:

Լրատվության միջոցներում հրապարակված տեղեկությունները ստուգելու և Միհրան Պողոսյանի ու մյուսների կողմից քրեական օրենքով չթույլատրված արարքներ կատարելու հանգամանքը պարզելու նպատակով քրեական գործի նախաքննության ընթացքում կատարվել են անհրաժեշտ բոլոր դատավարական գործողությունները, որոնց արդյունքում ձեռք են բերվել հետևյալ փաստական տվյալները: Այսպես՝

**1. ՀՀ գլխավոր հարկադիր կատարող Մ.Պողոսյանի կողմից <<Սիգթեմ ռեալ իսթեյթ ինքորփորեյթիդ>>, <<Հոփքինթեն թրեյդինգ ինքորփորեյթիդ>> և <<Բեսթ ռեալթի>> ընկերությունները հիմնադրելու, արտոնություններ և առավելություններ տրամադրելու կամ այլ ձևով հովանավորելու եղանակով դրանց կառավարմանը մասնակցելու դրվագով՝**

Միհրան Պողոսյանը որպես վկա ցուցմունք է տվել այն մասին, որ 2007թ-ի օգոստոս ամսից զբաղեցրել է ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի տեղակալի, իսկ 2008թ-ի հունիս ամսից՝ ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի պաշտոնները: 2016թ-ի ապրիլի 23-ին անձնական դիմումի համաձայն ազատվել է զբաղեցրած պաշտոնից: 2011թ-ին իր հեռավոր բարեկամ Էդուարդ Հարությունյանը խնդրել է օգնել միջազգային կազմակերպություններ հիմնադրելու հարցում, քանի որ ցանկություն է ունեցել Հայաստանում հիմնել ընկերություն, որի հիմնադիրները կհանդիսանան միջազգային կազմակերպություններ՝ Հայաստանում գործունեություն ծավալող ընկերությունը հեղինակավոր դարձնելու համար: Բարեկամի խնդրանքը չմերժելու համար կապ է հաստատել օֆշորային գոտում

կազմակերպություններ հիմնադրելու իրավասություն ունեցող Ռիչարդ Վառչուկի հետ և միջնորդել, որ Պանամայում ստեղծվեն միջազգային կազմակերպություններ Էդուարդ Հարությունյանի անունով: Ռ.Վառչուկն իր խնդրանքը կատարել է, բայց քանի որ դիմողն ինքն է եղել, թյուրիմացաբար ընկերությունները գրանցվել են ոչ թե Էդ.Հարությունյանի, այլ իր անվամբ: Այդ մասին տեղեկացված չի եղել, քանի որ նշված կազմակերպությունները գործունեություն չեն իրականացրել, նույնիսկ դրանց անվանումներն իրեն հայտնի չեն եղել: Ռիչարդ Վառչուկի հետ խոսելուց հետո նրա տվյալները փոխանցել է Էդ.Հարությունյանին, որից հետո Ռ.Վառչուկի հետ կապ է հաստատել Էդ.Հարությունյանը: Պանամայի օֆշորային գոտում գրանցված ,,Սիգթեմ ռեալ իսթեյթ ինքորփորեյթիդ,, և ,,Հոփքինթեն թրեյդինգ ինքորփորեյթիդ,, ընկերությունների հետ առնչություն չի ունեցել, դրանց գործունեությանը չի միջամտել, Շվեյցարական LCT BANK (Suise) SA կամ որևէ այլ բանկում նշված ընկերությունները հաշիվներ չեն ունեցել: Միայն ,,hetq.am,, էլեկտրոնային կայքի հրապարակումից հետո է տեղեկացել, որ արտասահմանյան ընկերությունները թյուրիմացաբար գրանցվել են իր անվամբ: Նույն հրապարկումից տեղեկացել է նաև, որ ,,Սիգթեմ ռեալ իսթեյթ ինքորփորեյթիդ,, ընկերության տնօրեն-նախագահը ՀՀ ԱԺ պատգամավոր Արթուր Ստեփանյանն է, իսկ ,,Հոփքինթեն թրեյդինգ ինքորփորեյթիդ,, ընկերության տնօրենը Լիաննա Մուրադյանը, ով իր կնոջ մորաքրոջ դուստրն է: Ինքը տեղյակ չի եղել, որ Արթուր Ստեփանյանը և Լիաննա Մուրադյանն առնչություն են ունեցել նշված կազմակերպությունների, ինչպես նաև այդ ընկերությունների կողմից հիմնադրված, Էդ.Հարությունյանին պատկանող ,,Բեսթ ռեալթի,, ՍՊԸ-ի հետ: ,,Բեսթ Ռեալթի,, ՍՊԸ-ն օրենքով սահմանված կարգով հաղթող է ճանաչվել անշարժ գույքի գնահատումն իրականացնող լիցենզավորված անձանց մրցույթում և որպես ՀՀ գլխավոր հարկադիր կատարող՝ այդ ընկերության հետ կնքել է անշարժ և շարժական գույքի գնահատման պայմանագրեր: Իր կողմից ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի պաշտոնը զբաղեցնելու ընթացքում ԴԱՀԿ ապահովող ծառայության կատարողական վարույթների շրջանակներում անշարժ և շարժական գույքի գնահատում են իրականացրել մի շարք ընկերություններ, այդ թվում՝ ,,Բեսթ ռեալթի,, ՍՊԸ-ն: Հարկադիր կատարողները կատարողական վարույթների շրջանակներում անշարժ և շարժական գույքի գնահատման փորձագետ են նշանակել իրենց նախաձեռնությամբ՝ հաշվի առնելով յուրաքանչյուր գնահատող կազմակերպության հնարավորությունները Հայաստանի Հանրապետության բոլոր մազերում փորձաքննություններ կատարելու առումով: Կատարողական գործողությունները կոնկրետ ժամկետներում կատարելու հանգամանքով պայմանավորված՝ հարկադիր կատարողները նախընտրել են համագործակցել հնարավորինս սեղմ ժամկետներում փորձաքննություններ կատարող կազմակերպությունների հետ: ԴԱՀԿ ապահովող ծառայության պետի պաշտոնը զբաղեցնելու ընթացքում ,,Բեսթ ռեալթի,, ՍՊԸ-ի գործունեությանը չի միջամտել, ընկերության կառավարմանը չի մասնակցել, որևէ արտոնություն չի տրամադրել, հովանավորչություն չի դրսևորել:

2012-2016թթ-ի ընթացքում ,,Բեսթ ռեալթի,, ՍՊԸ-ի տնօրենի պաշտոնը զբաղեցրած Էդուարդ Հարությունյանը որպես վկա ցուցմունք է տվել այն մասին, որ 2011թ-ին մտադրություն է ունեցել միջազգային ընկերություններ հիմնել՝ դրանց միջոցով Հայաստանում կազմակերպություն ստեղծելու համար: Ցանկացել է, որ

հայկական ընկերության հիմնադիրները լինեն միջազգային կազմակերպություններ՝ ընկերության հեղինակությունը բարձրացնելու, հետագայում միջազգային շուկա դուրս գալու հնարավորություն ունենալու համար: Պանամայի Հանրապետությունում ընկերություններ հիմնադրելու հարցով դիմել է իր հեռավոր ազգական Միհրան Պողոսյանին և նրան է փոխանցել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը: Որոշ ժամանակ անց Մ.Պողոսյանն իրեն ասել է, որ դիմել է արտասահմանում ընկերություններ գրանցելու հարցով զբաղվող, նրա ծանոթ Ռիչարդ Վառչուկին և վերջինս խոստացել է իր անվամբ երկու կազմակերպություններ հիմնադրել: Մ.Պողոսյանից վերցնելով Վառչուկի կոնտակտային տվյալները՝ արդեն անձամբ կապ է հաստատել նրա հետ և 2011թ. հոկտեմբեր ամսին Վառչուկն իրեն տեղեկացրել է, որ հիմնադրվել են ,,Միգթեմ ռեալ իսթեյթ ինքորփորեյթիդ,, և ,,Հոփքինթեն թրեյդինգ ինքորփորեյթիդ,, ընկերությունները: Չի ցանկացել անձամբ հանդիսանալ միջազգային ընկերությունների տնօրեն, քանի որ պատրաստվել է ղեկավարել հետագայում ստեղծվելիք հայկական ընկերությունը և խնդրել է իր ընտանիքի բարեկամներ Արթուր Ստեփանյանին և Լիաննա Մուրադյանին դառնալ իր հիմնադրած միջազգային ընկերությունների տնօրեններ: Նրանք խնդրանքը չեն մերժել և ինքը Ա.Ստեփանյանի և Լ.Մուրադյանի տվյալներն ուղարկել է Ռ.Վառչուկին: Իր հետ մտերիմ հարաբերությունների մեջ գտնվող Լ.Մուրադյանի և Ա.Ստեփանյանի տնօրեն հանդիսանալու հանգամանքը կրել է ձևական բնույթ, քանի որ Պանամայում գրանցված կազմակերպությունները որևէ առևտրային կամ ոչ առևտրային գործարք չեն կնքել, ձեռնարկատիրական գործունեություն չեն իրականացրել: Այդ կազմակերպությունները հիմնադրվել են Հայաստանում ընկերություն ստեղծելու համար: Նախապես պլանավորածի համաձայն՝ ,,Միգթեմ ռեալ իսթեյթ ինքորփորեյթիդ,, և ,,Հոփքինթեն թրեյդինգ ինքորփորեյթիդ,, միջազգային ընկերությունները 2012թ. դեկտեմբերի 12-ին Հայաստանում հիմնադրել են <<Բեսթ Ռեալթի>> ընկերությունը և ինքը նշանակվել է այդ ընկերության տնօրեն: Ընկերության հետ կապված բոլոր գործարքներն իրականացրել է անձամբ, Լ.Մուրադյանը և Ա.Ստեփանյանը դրա գործունեությանը չեն միջամտել: Սկզբնական շրջանում զբաղվել է անշարժ գույքի առուվաճառքով, որից հետո մամուլից պատահաբար տեղեկացել է ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայության կատարողական վարույթների շրջանակներում անշարժ և շարժական գույքի գնահատում կատարելու համար հայտարարած մրցույթին: Համապատասխան փորձագետներ է ընդունել աշխատանքի, ապա օրենքով սահմանված կարգով մրցույթի մասնակցության հայտ ներկայացրել ԴԱՀԿ ապահովող ծառայություն և հաղթող ճանաչվել: ԴԱՀԿ ապահովող ծառայության հետ կքնվել են համապատասխան պայմանագրեր, որից հետո կատարողական վարույթների շրջանակներում կատարել են անշարժ և շարժական գույքի գնահատում, տվել եզրակացություններ և օրենքով սահմանված կարգով վարձատրվել մատուցած ծառայությունների համար: ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայության կատարողական վարույթների շրջանակներում գույքի գնահատման փորձաքննություններ են կատարել 2014-2015թթ-ի ընթացքում: Հատկապես 2015թ-ի ընթացքում համեմատաբար ավելի շատ գործարքներ են կատարել, քանի որ իր ընկերության աշխատակիցներն աչքի են ընկել բարձր կատարողական արդյունավետությամբ, կարգապահությամբ, փորձաքննությունները կատարել են

սեղմ ժամկետներում, ինչը հավանության է արժանացել հարկադիր կատարողների կողմից, քանի որ կատարողական վարույթների ժամկետներն անհարկի չեն ձգձգվել:

Էդ.Հարությունյանը ,,hetq.am,, կայքում տեղադրված հրապարակման մասին հայտնել է, որ նշված տեղեկություններն իրականությանը չեն համապատասխանում, Միհրան Պողոսյանը ,,Բեսթ Ռեալթի,, ընկերության հետ որևէ կապ չի ունեցել, օրենքով սահմանված կարգով Մ.Պողոսյանի հետ միայն կնքել է պայմանագիր: Թեև Մ.Պողոսյանն իր հեռավոր ազգականն է և ինքը նրան խնդրել է օգնել իր անունով միջազգային կազմակերպություններ հիմնադրելու հարցով, սակայն ինքը նույնիսկ մտադրություն չի ունեցել ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայության հետ համագործակցելու և ի սկզբանե ցանկացել է հիմնել փորձագիտական կենտրոն՝ տարբեր հետազոտություններ կատարելու համար, բայց չի ստացվել: Հիմնականում ցանկացել է զբաղվել անշարժ գույքի առուվաճառքով, մտադրված է եղել աշխատանքի ընդունել գործակալների ու զբաղվել այդ բիզնեսով, բայց հաջողության չի հասել:

2016թ. ապրիլի սկզբներին ,,hetq.am,, էլեկտրոնային լրատվամիջոցի կայք էջի հրապարակումից է տեղեկացել, որ ,,Սիգթեմ ռեալ իսթեյթ ինքորփորեյթիդ,, և ,,Հոփքինթեն թրեյդինգ ինքորփորեյթիդ,, ընկերությունները հիմնադրվել են ոչ թե իր, այլ Միհրան Պողոսյանի անվամբ: Ամիջապես կապնվել է Միհրան Պողոսյանի հետ, ասել, որ թյուրիմացություն է եղել, որի մասին տեղյակ չի եղել: Դրանից հետո կապ է հաստատել Ռիչարդ Վառչուկի հետ և պահանջել պարզաբանումներ տալ տեղի ունեցածի վերաբերյալ, սակայն Վառչուկը հայտնել է, որ թյուրիմացություն է եղել: Դրանից հետո խնդրել է տեղեկություններ հայտնել Շվեյցարական բանկում այդ կազմակերպությունների հաշվեհամարների վերաբերյալ՝ նկատի ունենալով, որ իրեն պատկանող ընկերությունները որևէ բանկում հաշվեհամար չեն ունեցել, գործունեություն չեն իրականացրել, մինչդեռ ինտերնետային կայքի հրապարակման համաձայն՝ այդ կազմակերպությունները Շվեյցարական LCT BANK (Suise) SA բանկում ունեն հաշիվներ, որոնց միակ կառավարման ստորագրությունը պատկանում է Մ.Պողոսյանին: Վառչուկն իրեն ասել է, որ նա հանդիսանում է այդ բանկի գործադիր տնօրենը և կպատասխանեն միայն գրավոր հարցումներին: Իր և Վառչուկի միջև տեղի ունեցած խոսակցության մասին տեղեկացրել է ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայության պետի պաշտոնը զբաղեցնող Միհրան Պողոսյանին: Քանի որ հրապարակումների համաձայն՝ փաստաթղթերով երկու ընկերությունների 100 տոկոս բաժնետերը հանդիսացել է Միհրան Պողոսյանը, նա հանձնարարել է իր օգնականին էլեկտրոնային փոստով նամակ ուղարկել Շվեյցարական բանկ և նույն օրը պատասխան է ստացվել, որ նշված ընկերությունները բանկում հաշիվներ չունեն:

Էդ.Հարությունյանը հերքել է ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի պաշտոնը զբաղեցրած Մ.Պողոսյանի և ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Ա.Ստեփանյանի կողմից <<Սիգթեմ ռեալ իսթեյթ ինքորփորեյթիդ>>, <<Հոփքինթեն թրեյդինգ ինքորփորեյթիդ>> և <<Բեսթ ռեալթի>> ընկերությունները հիմնադրելու, այդ ընկերությունների կառավարմանը մասնակցելու և ի պաշտոնե կազմակերպություններին արտոնություններ և առավելություններ տրամադրելու եղանակով հովանավորելու հանգամանքը:

Էդ.Հարությունյանի ցուցմունքին, ըստ էության, նույնաբովանդակ

ցուցմունքներ են տվել նաև Արթուր Ստեփանյանը և Լիաննա Մուրադյանը, ովքեր հայտնել են, որ համաձայնել են դառնալ միջազգային ընկերությունների տնօրեններ՝ իրենց մտերիմ Էդ.Հարությունյանի խնդրանքով: Միջազգային այդ կազմակերպությունների, ինչպես նաև դրանց կողմից հիմնադրված ,,Բեսթ ռեալթի,, ընկերության գործունեությանը չեն միջամտել, այն հանդիսացել է Էդուարդ Հարությունյանի սեփականությունը, ,,Բեսթ ռեալթի,, ՍՊԸ-ում իրենց մասնակցությունը կրել է ձևական բնույթ:

Ա.Ստեփանյանը և Լ.Մուրադյանը նույնպես հերքել են գլխավոր հարկադիր կատարողի պաշտոնը զբաղեցրած Միհրան Պողոսյանի կողմից <<Սիգթեմ ռեալ իսթեյթ ինքորփորեյթիդ>>, <<Հոփքինթեն թրեյդինգ ինքորփորեյթիդ>> և <<Բեսթ ռեալթի>> ընկերությունների հետ առնչություն ունենալու հանգամանքը:

2016թ. հունիս ամսից ,,Բեսթ ռեալթի,, ՍՊԸ-ի սեփականատեր և տնօրեն հանդիսացող Գոռ Տոնոյանը ցուցմունք է տվել այն մասին, որ ընկերությունը գնել է Էդ.Հարությունյանից: ՀՀ նախկին գլխավոր հարկադիր կատարող Միհրան Պողոսյանի կողմից ,,Բեսթ ռեալթի,, ընկերության հետ առնչություն ունենալու մասին տեղեկացված չի եղել:

Նախաքննության ընթացքում հարցաքննվել են ,,Բեսթ ռեալթի,, ՍՊԸ-ում երբևէ աշխատած բոլոր անձինք, մասնավորապես՝ անշարժ գույքի գնահատողներ Վահրամ Սաֆարյանը, Տիգրան Տեր-Հարությունովը, Վահան Ղազարյանը, հաշվետար Աննա Միրզոյանը և գործակալ Արտակ Սերոբյանը, ովքեր հայտնել են, որ ,,Բեսթ ռեալթի,, ՍՊԸ-ի տնօրեն և սեփականատեր է հանդիսացել Էդուարդ Հարությունյանը: Ընկերության աշխատակիցները հերքել են ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայության պետ Միհրան Պողոսյանի կամ որևէ այլ պաշտոնատար անձի կողմից ,,Բեսթ ռեալթի,, ընկերության գործունեությանը միջամտելու, կառավարմանը մասնակցելու, հովանավորելու կամ որևէ արտոնություններ տրամադրելու հանգամանքները:

Նախաքննության ընթացքում ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից առգրավվել է ,,Բեսթ Ռեալթի,, ՍՊԸ-ի ռեգիստրային գործը, ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայությունից և ,,Բեսթ Ռեալթի,, ՍՊԸ-ից ձեռք են բերվել անհրաժեշտ փաստաթղթեր և պարզվել է, որ ,,Բեսթ ռեալթի,, ՍՊԸ-ի հիմնադիրներ ու մասնակիցներ են հանդիսացել <<Սիգթեմ ռեալ իսթեյթ ինքորփորեյթիդ>> /գրանցված Պանամայի Հանրապետության հանրային գրանցման գրասենյակում/ և <<Հոփքինթեն թրեյդինգ ինքորփորեյթիդ>> /գրանցված Պանամայի Հանրապետության հանրային գրանցման գրասենյակում/ ընկերությունները: 10.12.2012թ. ,,Բեսթ Ռեալթի,, ՍՊԸ-ի հիմնադիրների ընդհանուր /հիմնադիր/ ժողովում <<Սիգթեմ ռեալ իսթեյթ ինքորփորեյթիդ>>, ընկերությունը՝ ի դեմս տնօրեն/նախագահ Արթուր Ստեփանյանի և <<Հոփքինթեն թրեյդինգ ինքորփորեյթիդ>> ընկերությունը՝ ի դեմս տնօրեն/նախագահ Լիանա Մուրադյանի հիմնադրել են ,,Բեսթ ռեալթի,, անվանումով սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, որի տնօրեն է նշանակվել Էդուարդ Հարությունյանը: ,,Բեսթ Ռեալթի,, ՍՊԸ-ի ռեգիստրային գործում առկա փաստաթղթերի զննությամբ Միհրան Սուրենի Պողոսյանի կողմից ընկերության հիմնադրմանը և կառավարմանը որևէ կերպ մասնակցություն ունենալու մասին վկայող փաստաթղթեր կամ գրառումներ չեն հայտնաբերվել:

Նախաքննության ընթացքում պարզվել է, որ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայության և ,,Բեսթ ռեալթի,, ՍՊԸ-ի միջև 17.04.2014թ. կնքվել է ,,Անշարժ և շարժական գույքի գնահատման,, պայմանագիր, որի հիմքով ընկերությանը պարբերաբար հանձնարարվել է կատարել շարժական և անշարժ գույքի գնահատում և դրանց արդյունքների հիման վրա ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայությանը տրամադրվել են գրավոր հաշվետվություններ /եզրակացություններ/:

Պարզվել է նաև, որ ,,Բեսթ Ռեալթի,, ՍՊԸ-ից բացի քննության համար հետաքրքրություն ներկայացնող ժամանակահատվածում դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության հարուցած կատարողական վարույթների շրջանակներում անշարժ և շարժական գույքի գնահատում են իրականացրել նաև <<Ալտա Վիպ>>, <<Ամինտաս գրուպ>>, <<Արմեքսպերտիզա>> և <<Լոու Աուդիտ>> ընկերությունները:

ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի տեղակալ Գագիկ Միրիջանյանը, ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ բաժնի պետ Արմեն Հարությունյանը, նույն բաժնի պետի տեղակալ Արտակ Մեժլումյանը, Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն բաժնի պետ Արթուր Հակոբյանը նույնաբովանդակ ցուցմունքներ են տվել այն մասին, որ 2014-2015թթ-ի ընթացքում հարկադիր կատարողները կատարողական վարույթների շրջանակներում անշարժ և շարժական գույքի գնահատման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ որոշումներ են կայացրել փորձագետ նշանակելու մասին: Նշված ժամանակ գործող կարգի համաձայն՝ հարկադիր կատարողների կողմից լիազորված կազմակերպությունների կազմից փորձագետ ընտրելը հայեցողական իրավունք է եղել և նկատի ունենալով, որ ,,Բեսթ ռեալթի,, ՍՊԸ-ի մասնագետները փորձաքննություններն իրականացրել են արագ, որակյալ, ամբողջական և գործնականում այդ կազմակերպության փորձագետների կողմից տրված եզրակացությունների արդյունքների վերաբերյալ կողմերը գրեթե դժգոհություններ չեն արտահայտել, դրանք դատական կարգով չեն վիճարկվել, հարկադիր կատարողները նախընտրել են փորձագետ նշանակել նաև այդ կազմակերպությունից: Հարկադիր կատարողները փորձագետի ընտրության հարցում որևէ կաշկանդվածություն չեն ունեցել: ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայության պետ Միհրան Պողոսյանի կողմից ինչպես ,,Բեսթ ռեալթի,, ՍՊԸ-ին, այնպես էլ որևէ այլ կազմակերպության արտոնություններ տրամադրելու, հովանավորելու դեպքեր չեն եղել: ,,Բեսթ ռեալթի,, ՍՊԸ-ի տնօրենը և սեփականատերը հանդիսացել է Էդուարդ Հարությունյանը, որի հետ կազմակերպել են փորձաքննությունների անցկացումը՝ նկատի ունենալով, որ յուրաքանչյուր դեպքում անշարժ և շարժական գույքը գնահատման համար փորձագետին ներկայացրել է հարկադիր կատարողը: Գլխավոր հարկադիր կատարող Մ.Պողոսյանի կողմից ,,Բեսթ ռեալթի,, ՍՊԸ-ի հետ հնարավոր առնչություն ունենալու մասին տեղեկացված չեն եղել:

Հարկ է նշել, որ ,,Դատական ակտերի հարկադիր կատարման մասին,, ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝

1.Կատարողական գործողությունների ընթացքում ծագող հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման համար հարկադիր կատարողն իրավունք ունի նշանակել փորձագետ (փորձագետներ):

2.Փորձագետ նշանակելու մասին հարկադիր կատարողը կայացնում է որոշում:

3.Փորձագետը տալիս է գրավոր եզրակացություն:

4.Փորձագետը վարձատրվում է կատարողական վարույթի ծախսերի հաշվին:

2014-2015թթ-ի ընթացքում ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայության հետ անշարժ և շարժական գույքի գնահատման պայմանագրեր կնքած և փորձաքննություններ կատարած մյուս ընկերությունների ներկայացուցիչները, մասնավորապես՝ ,,Ամինտաս Գրուպ,, ՍՊԸ-ի սեփականատեր և տնօրեն Աշոտ Սիմոնյանը, ,,Ալտա Վիպ,, ՍՊԸ-ի գործադիր տնօրեն Տիգրան Գրիգորյանը, ,,Լոու Առդիտ,, ՍՊԸ-ի տնօրեն Վարազդատ Ասատրյանը նախաքննության ընթացքում տված, ըստ էության, նույնաբովանդակ ցուցմունքներով հայտնել են, որ ՀՀ գլխավոր հարկադիր կատարող Միհրան Պողոսյանի կողմից ,,Բեսթ ռեալթի,, ՍՊԸ-ին արտոնություններ տրամադրելու, հովանավորելու դեպքեր չեն նկատել, Մ.Պողոսյանի կողմից ,,Բեսթ ռեալթի,, ՍՊԸ-ի գործունեությանը միջամտելու կամ կառավարմանը մասնակցելու մասին տեղեկացված չեն եղել, նույնիսկ չեն լսել, որ նա առնչություն է ունեցել այդ ընկերության հետ:

,,Սիգթեմ ռեալ իսթեյթ ինքորփորեյթիդ,, և ,,Հոփքինթեն թրեյդինգ ինքորփորեյթիդ,, ընկերությունների վերաբերյալ տեղեկություններ ձեռք բերելու համար համապատասխան հարցումներ են ուղարկվել ՀՀ Կենտրոնական բանկ, սակայն 05.08.2016թ. պատասխան գրություն է ստացվել այն մասին, որ գործելով օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում՝ ՀՀ կենտրոնական բանկը իրավասու չէ տրամադրել հայցվող բանկային գաղտնիք կազմող տեղեկությունը:

Բացի այդ, Պանամայի Հանրապետության օֆշորային գոտում գրանցված ,,Սիգթեմ ռեալ իսթեյթ ինքորփորեյթիդ,, և ,,Հոփքինթեն թրեյդինգ ինքորփորեյթիդ,, ընկերությունների կողմից Շվեյցարական LCT BANK (Suise) SA բանկում հաշիվներ ունենալու և դրանք Միհրան Պողոսյանի կողմից կառավարվելու հանգամանքը պարզելու, ինչպես նաև վերոհիշյալ ընկերությունների գործունեության վերաբերյալ՝ քրեական գործի համար նշանակություն ունեցող տեղեկություններ ստանալու նպատակով կազմվել են քրեական գործով իրավական օգնություն հայցելու մասին միջնորդություններ և ուղարկվել Շվեյցարիայի Համադաշնության և Պանամայի Հանրապետության իրավասու մարմիններին, սակայն ՀՀ գլխավոր հարկադիր կատարող Մ.Պողոսյանի կողմից ,,Սիգթեմ ռեալ իսթեյթ ինքորփորեյթիդ,, և ,,Հոփքինթեն թրեյդինգ ինքորփորեյթիդ,, ընկերությունների գործունեությանն ապօրինի միջամտելու, դրանց հետ առնչություն ունենալու հանգամանքը հիմնավորող տվյալներ ձեռք չեն բերվել:

**2. Մ.Պողոսյանի կողմից ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող <<Քեթրին գրուպ>> ՍՊԸ-ի, <<Կեչառիս Հոթել>> ՍՊԸ-ի, <<Բանջիո ինվեստ>> ՍՊԸ-ի, <<Փարքինգ սիթի Սերվիս>> ՓԲԸ-ի, <<Միկշին>> ՍՊԸ-ի, <<Կագա Կրեդո>> ՍՊԸ-ի, <<Միկմետալ>> ՓԲԸ-ի և <<hetq.am>> էլ. կայքի հրապարակման մեջ նշված մյուս ընկերությունների գործունեությանն ապօրինի մասնակցելու և քաղաքացիներից գումարի բռնագանձման պահանջով դատարաններ հայցադիմումներ ներկայացնելու դրվագներով՝**

Միհրան Պողոսյանը ցուցմունք է տվել այն մասին, որ 1997թ. հունվարի 20-ին հիմնադրել է ,,Քեթրին գրուպ,, ընկերությունը, որը սկսել է իր գործունեությունը հացամթերքի արտադրությունից, հետագայում ընկերության մասնակցությունից դուրս է եկել պետական ծառայության անցնելու պատճառով և այդ պահից սկսած ընկերության գործունեության հետ կապ չի ունեցել: Իր հիմնադրած, ինչպես նաև հետագայում ձեռք բերած բոլոր կազմակերպությունները վաճառել է տարբեր անձանց, սակայն նկատի ունենալով, որ դրանք հաջող բիզնեսներ են եղել, մինչ այդ բավականին մեծ աշխատանք է կատարել բիզնեսի առաջընթացն ապահովելու համար, նախընտրել է այդ ընկերությունները վաճառել իր բարեկամներին, ովքեր նախաձեռնություն են դրսևորել կազմակերպությունները գնելու հարցում: ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայությունում պաշտոն զբաղեցնելու ընթացքում ինչպես <<Քեթրին գրուպ>>, այնպես էլ իր ազգականներին պատկանող մի շարք այլ ընկերությունների կառավարմանը չի միջամտել, որևէ հովանավորչություն չի եղել: Եթե ,,Քեթրին Գրուպ,, ՍՊԸ-ի հետ ԴԱՀԿ ապահովող ծառայությունը պայմանագրեր է կնքել, ապա դա կատարվել է օրենքով սահմանված կարգով, բոլոր ընթացակարգերի խիստ պահպանմամբ, որևէ արտոնություն այդ ընկերությանը չի տրամադրվել: Իր ղեկավարած ծառայությունը պետական գնումների շրջանակներում, գործունեության անհրաժեշտությունից ելնելով, բազմաթիվ պայմանագրեր է կնքել տարբեր կազմակերպությունների, այդ թվում՝ ,,Քեթրին գրուպ,, ՍՊԸ-ի հետ:

Մ.Պողոսյանը հայտնել է նաև, որ կինը՝ Կարինե Մխիթարյանը, ,,Քեթրին Գրուպ,, ՍՊԸ-ում մասնակցություն է ունեցել մինչև 2015թ-ը, սակայն նրա բաժնեմասը չնչին է եղել՝ մոտ 2 տոկոս, որը մեխանիկորեն պահպանվել է նաև իր կողմից պետական ծառայության անցնելուց հետո: Կ.Մխիթարյանը աշխատել է ինչպես ,,Քեթրին Գրուպ,, ՍՊԸ-ում, այնպես էլ այլ ընկերություններում, սակայն այդ կազմակերպությունների գործունեությանն ինքը չի միջամտել, դրանց ի պաշտոնե որևէ արտոնություն չի տրամադրել:

Մ.Պողոսյանը հերքել է նաև հրապարակման մեջ նշված՝ <<Կեչառիս Հոթել>> ՍՊԸ-ի, <<Փարքինգ սիթի Սերվիս>> ՓԲԸ-ի, <<Միկշին>> ՍՊԸ-ի, <<Կագա Կրեդո>> ՍՊԸ-ի, <<Միկմետալ>> ՓԲԸ-ի և մյուս ընկերությունների հետ առնչություն ունենալու, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող այդ ընկերությունների գործունեությանը միջամտելու հանգամանքը: Հայտնել է, որ դրանք պատկանում են իր ազգականներին, մասնավորապես՝ Վահան, Տիգրան և Գևորգ Հարությունյաններին և մյուսներին: Պանամայի Հանրապետության օֆշորային գոտում գրանցված ,,Բանջիո Ինվեստ,, ընկերությունը Ռիչարդ Վառչուկի օգնությամբ ձեռք է բերել 2005թ-ին, սակայն 2007թ. ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայությունում պաշտոն ստանձնելուց առաջ արդեն իսկ այդ կազմակերպությունը վաճառել է Իսպանիայի քաղաքացի Ռիկարդո Մերինոյին, որը հետագայում Հայաստանում հիմնել է ,,Ֆրեշ,, ՍՊԸ-ն: Նշված կազմակերպության հետագա գործունեությունից տեղեկացված չի եղել:

2013-2014թթ. ընթացքում իր կողմից տարբեր քաղաքացիներից գումարի բռնագանձման պահանջով դատարաններ հայցադիմումներ ներկայացնելու և պարտքը դատական կարգով վերադարձնելու վերաբերյալ հայտնել է, որ նախքան պետական պաշտոն զբաղեցնելը զբաղվել է բիզնեսով, ունի անշարժ գույք, որոնք

տրվել են վարձակալությամբ և հետագայում որոշ վարձակալներ իրենց պայմանագրային պարտավորությունները չեն կատարել և որպես ՀՀ քաղաքացի՝ համապատասխան հայցադիմումներ է ներկայացրել դատարան և ստացել պատճառված վնասների հատուցում: Նշված քաղաքացիաիրավական գործարքները ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայությունում իր զբաղեցրած պաշտոնի հետ որևէ առնչություն չունեն, խնդիրը լուծվել է դատարանում հաշտության համաձայնագրի կնքմամբ և կատարողական վարույթներ չեն հարուցվել:

Միհրան Պողոսյանի ցուցմունքին, ըստ էության, նույնաբովանդակ ցուցմունքներ են տվել նաև Կարինե Մխիթարյանը, տարբեր ժամանակ ,,Քեթրին Գրուպ,, ընկերության տնօրենի պաշտոնը զբաղեցրած Գագիկ Բաղալյանը և Գոհար Նազարյանը, նշված, ինչպես նաև ,,Ֆրեշ,, ՍՊԸ-ի սեփականատեր հանդիսացած՝ Անտոնիա Ռիկարդո Մերինո Մերինոն:

Երևան քաղաքի բնակիչ Գևորգ Աֆանդյանը որպես վկա ցուցմունք է տվել այն մասին, որ 1987թ-ից մինչև 2014թ-ն զբաղվել է ձեռնարկատիրական գործունեությամբ, որի ընթացքում Միհրան Պողոսյանից տարածքներ է վարձակալել: Ժամանակի ընթացքում որոշ խնդիրների պատճառով երկար ժամանակ չի կարողացել վարձակալության գումարները վճարել և պարտքեր է կուտակել: 2013թ. վերջերին Միհրան Պողոսյանը քաղաքացիական հայցով դիմել է դատարան՝ իր դեմ ներկայացնելով մոտ հինգ միլիոն ԱՄՆ դոլարի գումարի պահանջ: Քանի որ որոշակի անճշտություններ են եղել գումարի չափի վերաբերյալ, հանդիպել է Միհրան Պողոսյանին, ճշտել են գումարի չափը և կնքել հաշտության պայմանագիր: Դրանից հետո Միհրան Պողոսյանն իր դեմ ներկայացրած հայցից հրաժարվել է, իսկ ինքը կատարել է բոլոր պարտավորությունները: Գումարային պահանջի վերաբերյալ հայց ներկայացնելիս, ինչպես նաև դրա հետ կապված ողջ պրոցեսի ընթացքում Միհրան Պողոսյանն իր հետ շփվել է որպես ՀՀ քաղաքացի և երբևէ պաշտոնեական դիրքի չարաշահում թույլ չի տվել: Իր նկատմամբ ճնշումներ չեն եղել, միմյանց հետ ունեցել են քաղաքացիաիրավական բնույթի վեճ, որը լուծվել է օրենքով սահմանված կարգով:

Նախաքննության ընթացքում հարցաքննվել են նաև <<hetq.am>> էլեկտրոնային կայքում հրապարակված հոդվածում հիշատակված <<Կեչառիս Հոթել>> ՍՊԸ-ի, <<Փարքինգ սիթի Սերվիս>> ՓԲԸ-ի, <<Միկշին>> ՍՊԸ-ի, <<Կազա Կրեդո>> ՍՊԸ-ի, <<Միկմետալ>> ՓԲԸ-ի և մյուս ընկերությունների ներկայացուցիչներ Վազգեն Հարությունյանը, Վահան Հարությունյանը, Խաչատուր Մադոյանը, Գևորգ Հարությունյանը, Տիգրան Հարությունյանը, Էդուարդ Հարությունյանը և մյուսները, ովքեր հերքել են Միհրան Պողոսյանի կողմից ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայությունում պաշտոն զբաղեցնելու ընթացքում նշված ընկերությունների գործունեությանը միջամտելու, դրանց կառավարմանը մասնակցելու, ի պաշտոնե արտոնություններ և առավելություններ տրամադրելու եղանակով հովանավորելու հանգամանքը:

Նախաքննության ընթացքում ՀՀ ԱՆ դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունից ստացվել է գրություն այն մասին, որ ծառայությունը ,,Քեթրին Գրուպ,, և մյուս ընկերությունների հետ պայմանագրեր է կնքել ,,Գնումների մասին,, ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Այսպիսով, սույն քրեական գործի նախաքննության ընթացքում քննարկվում է ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի պաշտոնը զբաղեցրած Միհրան Պողոսյանի և ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արթուր Ստեփանյանի կողմից ձեռնարկատիրական գործունեության ապօրինի մասնակցելու հանգամանքները:

ՀՀ քրեական օրենսգրքի 310-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում պաշտոնատար անձի կողմից, օրենքով սահմանված արգելքին հակառակ, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող կազմակերպություն հիմնադրելու կամ անձամբ կամ վստահված անձի միջոցով այդպիսի կազմակերպության կառավարմանը մասնակցելու համար, եթե այդ արարքները կապված են այդպիսի կազմակերպությանն արտոնություններ և առավելություններ տրամադրելու կամ այլ ձևով հովանավորելու հետ:

Հանցագործության օբյեկտիվ կողմը դրսևորվում է երկու տարբեր գործողություններից որևէ մեկի կատարմամբ: Դրանք են՝

1/ օրենքով սահմանված արգելքին հակառակ՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող կազմակերպություն հիմնադրելը,

2/ օրենքով սահմանված արգելքին հակառակ՝ անձամբ կամ վստահված անձի միջոցով այդպիսի կազմակերպության կառավարմանը մասնակցելը:

Պաշտոնատար անձի քրեական պատասխանատվության պարտադիր պայման է այն հանգամանքը, որ նա, օգտագործելով իր ծառայողական լիազորությունները, արտոնություններ և առավելություններ է տալիս իր կողմից ստեղծված կամ իր կողմից ղեկավարվող կազմակերպությանը, կամ այլ ձևով հովանավորում է այդ կազմակերպությանը: Մասնագիտական գրականության համաձայն՝ նմանատիպ գործողություններ կարող են դիտվել արտոնյալ պայմաններով վարկերի տրամադրումը, հարկերի վճարման արտոնյալ պայմանների տրամադրումը, մրցակիցների համար արգելքների ստեղծումը, նրանց շուկայից դուրս մղումը և այլն:

Հանցագործության սուբյեկտիվ կողմը դրսևորվում է ուղղակի դիտավորությամբ: Հանցակազմի վերլուծությունից ակնհայտ է, որ այն ձևական է և ավարտված է համարվում օրենքով նկարագրված գործողությունները կատարելու պահից, թեև հանցագործության շարժառիթներն ու նպատակները հանցակազմի հատկանիշ չեն, սակայն մասնագիտական գրականության համաձայն՝ հիմնականում այս հանցանքը կատարվում է շահադիտական շարժառիթներով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հետևությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ մեղադրանքն ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում, մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի կամ կասկածյալի:

Հանցանք կատարելու մեջ անձի մեղավորությունը հաստատելիս ապացույցների բավարարությունը որոշելու հարցին անդրադարձել է ՀՀ վճռաբեկ դատարանը Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի վերաբերյալ գործով իր 2014թ. հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշմամբ: Մասնավորապես՝

իրացնելով օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու իր սահմանադրական գործառույթը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը հիշատակված դատական ակտում նախադեպային նշանակության իրավական դիրքորոշումներ է արտահայտել առ այն, որ (...) Գործի լուծման համար բավարար ապացույցներ ասելով՝ պետք է հասկանալ թույլատրելի, վերաբերելի և արժանահավատ ապացույցների համակցություն, որը, հաղթահարելով անմեղության կանխավարկածը, անաչառ դիտորդի մոտ կձևավորի հիմնավոր կասկածից վեր համոզվածություն անձի մեղավորության վերաբերյալ, ինչպես նաև կհաստատի գործով ապացուցման առարկան կազմող մյուս հանգամանքները և հնարավորություն կտա կայացնել հիմնավորված և պատճառաբանված որոշում:

(...) Ապացույցների բավարարությունը չի կարող որոշվել թվաբանական ցուցանիշով: Ակնհայտ է, որ ապացույցները բավարար չեն, եթե՝

1) գործում բացակայում է որևէ ապացույց գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող որևէ հանգամանքի պարզման համար,

2) եղած ապացույցը թույլ չի տալիս պարզել այդ հանգամանքը անհրաժեշտ խորությամբ և լրիվությամբ,

3) այդ հանգամանքի ապացուցվածությունը կասկած է հարուցում (...):

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ քրեական դատավարությունում մեղքի հարցը լուծելիս որպես ապացույցների բավարարության շեմ պետք է գործի <<հիմնավոր կասկածից վեր>> ապացուցողական չափանիշը: Ընդ որում, <<հիմնավոր կասկածից վեր>> ապացուցողական չափանիշ ասելով, պետք է հասկանալ փաստական տվյալների (ապացույցների) այնպիսի համակցություն, որը բացառում է հակառակի ողջամիտ հավանականությունը: Վերոգրյալը չի նշանակում, որ հանցանք գործելու մեջ անձի մեղավորությունն ընդհանրապես չի կարող առաջացնել որևէ կասկած, սակայն այդպիսի կասկածի հավանականության դեպքում դրա աստիճանը պետք է լինի աննշան (խիստ ցածր):

Այլ խոսքով՝ մեղադրանքը կազմող յուրաքանչյուր փաստական հանգամանք պետք է հիմնավորվի ապացույցների այնպիսի ծավալով, որը կբացառի դրա ապացուցվածության վերաբերյալ ցանկացած ողջամիտ կասկած (...):

Տվյալ դեպքում՝ վարույթն իրականացնող մարմինն արձանագրում է, որ հիշատակված փաստական տվյալներով, ինչպես նաև նախաքննության ընթացքում կատարված մի շարք այլ դատավարական և քննչական գործողությունների արդյունքում ձեռք բերված ապացույցներով չի հաստատվել այն հանգամանքը, որ պաշտոնատար անձ հանդիսացող Միհրան Պողոսյանը, օգտագործելով իր ծառայողական լիազորությունները, արտոնություններ և առավելություններ է տվել <<Սիգթեմ ռեալ իսթեյթ ինքորփորեյթիդ>>, <<Հոփքինթեն թրեյդինգ ինքորփորեյթիդ>>, <<Բեսթ ռեալթի>>, <<Բանջիո ինվեստ>>, <<Քեթրին գրուպ>> և մյուս ընկերություններին կամ այլ ձևով հովանավորել այդ կազմակերպություններին, որպիսի հանգամանքները ՀՀ քրեական օրենսգրքի 310-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հանցակազմի պարտադիր հատկանիշներ են:

Այսպիսով, վերը նշված քրեաիրավական և քրեադատավարական նորմերի, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների լույսի ներքո գնահատելով սույն քրեական գործով ձեռք բերված ապացույցները և հաշվի առնելով, որ ՀՀ Սահմանադրության համաձայն՝ հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հետևությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ, վարույթն իրականացնող մարմինը, գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա ձևավորված ներքին համոզմամբ, հանգում է այն հետևության, որ քրեական գործով ձեռք չեն բերվել բավարար փաստական տվյալներ այն մասին, որ Միհրան Պողոսյանը և Արթուր Ստեփանյանը ապօրինի մասնակցություն են ունեցել ձեռնարկատիրական գործունեությանը կամ կատարել են պետական ծառայության դեմ ուղղված որևէ հանցավոր արարք և սպառվել են այդ ուղղությամբ նոր ապացույցներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները, հետևաբար՝ Մ.Պողոսյանի և Ա.Ստեփանյանի արարքներում հանցակազմը բացակայում է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 55-րդ հոդվածով, 124-127-րդ և 261-263-րդ հոդվածներով՝

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 62211616 քրեական գործով Միհրան Պողոսյանի և Արթուր Ստեփանյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 310-րդ հոդվածով քրեական հետապնդում չիրականացնել և քրեական գործով վարույթը կարճել՝ նրանց արարքներում հանցակազմի բացակայության հիմքով:
2. Որոշման պատճեններն ուղարկել Մ.Պողոսյանին և Ա.Ստեփանյանին ու նրանց պարզաբանել, որ կարող են որոշման պատճենը ստանալու պահից 7 օրվա ընթացքում որոշումը բողոքարկել վերադաս դատախազին: Դատախազը բողոքը ստանալու պահից 7 օրվա ընթացքում որոշում է կայացնում բողոքը մերժելու կամ բավարարելու մասին: Կայացված որոշման պատճենն անհապաղ ուղարկվում է բողոքը ներկայացրած անձին: Բողոքը մերժելու մասին դատախազի կայացրած որոշման պատճենը ստանալու պահից մեկ ամսվա ընթացքում, կամ եթե դրա վերաբերյալ պատասխան չի ստացվել, բողոք ներկայացնելուց հետո մեկ ամսվա ժամկետը լրանալու օրվանից՝ մեկ ամսվա ընթացքում որոշումը կարող է բողոքարկվել դատարան:
3. Որոշման պատճենն ուղարկել նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազին:

ՀԿԳ ավագ քննիչ՝ Դ.Կոստանդյան